ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ Լոռու մարզ , ք. Թումանյան, Կենտրոնական փ., շ.1, Հեռ.
(+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

N 699
26 նոյեմբեր 2019թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Ղուկասյան

Թումանյան համայնքի ղեկավարի թիվ 130-Ա և 131-Ա որոշումները:

Առդիր՝ 1 ֆայլ:

Հարգանքով

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ռ. Շահվերդյան
098 048 046

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 130

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով և հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 1625019 վկայականը, տրվ.26.05.2003թ. և Թումանյան համայնքի Քարինջ գյուղի բնակիչ Վազգեն Ռուբիկի Թորոսյանի դիմումը՝ որոշում եմ.

1.Թումանյան համայնքի Քարինջ գյուղի բնակիչ Վազգեն Ռուբիկի Թորոսյանին սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզի Քարինջ գյուղի 06-110-029-000017 ծածկագրի տնամերձ հողամասին մակերեսի չափը՝0.252 հա տրամադրել նոր <<ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ.Քարինջ, 8-րդ փողոց,տնամերձ հողամաս թիվ 7 >> հասցեն:
2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 131

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ 5-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 9 ՇԵՆՔԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42 ,43-րդ հոդվածներով և 35-րդ հոդվածի 1-ին մասի 22,24-րդ կետերով, Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի գ) ենթակետով, 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և N 912-Ն որոշումների դրույթներով և հաշվի առնելով Անուշ Սուրենի Ղալայանի դիմումը (մուտք՝ 2019 թվականի նոյեմբերի 15-ի N 391)՝ որոշում եմ.

1.Թումանյան քաղաքի 5-րդ փողոցի թիվ 9 շենքի հարևանությամբ գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման 0,00249 հա մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 24.9քմ արտաքին մակերեսով ավտոտնակը համարել Թումանյան համայնքի սեփականությունը և ճանաչել օրինական:
2.Շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը,վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3.Հողամասի սահմանները որոշվում են <<ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ>> ՍՊԸ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4.Շինությանը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, Թումանյան քաղաք,5-րդ փողոց,թիվ 9/29 ավտոտնակ:

5.24.9 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և դրանով զբաղեցված,պահպանման և սպասարկման համար առանձնացված 0.00249 հա մակերեսով հողատարածքը գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի կարգով առաջարկել կառույցն իրականացնող անձին՝ Անուշ Սուրենի Ղալայանին:

6.Հայաստանի Հանրապետության Կառավարության 18.05.2006թ.թիվ 912 –Ն որոշման 4-րդ և 35-րդ կետերով սահմանված կարգի և արժեքների համաձայն.

1/ շինության օտարման գին սահմանել 24.9 քմ x 350 դրամ = 8715 դրամ,

2/ հողի օտարման գին սահմանել 24,9 քմ x 96 դրամ = 2390,4դրամ,

ընդամենը՝ 11105,4 դրամ:

7.Հայաստանի Հանրապետության Կառավարության 8.05.2006թ.թիվ 912-Ն որոշման 35.1 կետի համաձայն սահմանված չափերով ձևավորված վաճառքի գնին հավելվում են տվյալ միավորի նկատմամբ մինչև օտարումը պետության կամ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ ընդամենը 26000 դրամ:

8.Անուշ Սուրենի Ղալայանի կողմից 15 աշխատանքային օրվա ընթացքում գնման նախապատվության առաջարկը չընդունելու կամ գնման նախապատվության առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում օրինականացված կառույցի և դրա համար սահմանված կարգով առանձնացված հողամասի վաճառքի գները չվճարելու դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքումկրկին ներկայացնել գրավոր առաջարկություն անշարժ գույքը վարձակալելու վերաբերյալ:Վարձակալության իրավունքից ևս հրաժարվելու դեպքում այն տնօրինել 18.05.2006թ.թիվ 912-Նորոշման 37-րդ կետով սահմանված կարգով:

9.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ**